փառ մտօք քարոզէր անհատատիցն զՔրիստոս Աստուած ։

‘‘(Ի վանս Թագէոսի Առաքելոյն յԱրտագ ձեռնադրեցաւ վարդապետ) և զբազումս ածէր ի հաւատս ճշմարիտ և լուսաւորէր զամենեսեան մկրտութեամբ սուրբ աւազանին ։

‘‘ԶՔրիստոս Աստուած քարոզէր և զառաջնորդ պարսից և զմահմէտ սուտ և խաբեբայ անուանէր՝ կարապետ նենգին, և մոլորեցուցիչ, մարդ անօրէնութեան և որդի կորստեան ։

‘‘Զոր կալեալ պարսիցն և չատ ջանացին ողոքանօք համոզել, և ոչ կարացին խափանել զնա զՔրիստոս Աստուած ասելոյն. ապա զանեցին զնա ուժգին սաստիկ և կիսամահ արարին և թողին ի Թաւրէզ, զի թերեւս զայցէ ի հաւանութիւն չար կամաց նոցա ։

‘‘Բայց նա ոչ դադարէր ի քարոզելոյ զՔրիստոս Աստուած, և հաստատէր վկայութեամբ ի սուրբ Աւետարանէն և ի գրոց իւրեանց Ղուռանէն, և գնացեալ ի Հեչտատ և յայլ տեղիս՝ ըզբազումս է ած ի հաւատս Քրիստոսի ։

‘‘Եւ անտի գնաց ի քաղաքաղիւղ մի որ կոչի Գուռնատայ և անդ եւս քարոզեաց զՔրիստոս Աստուած և չարչարեցաւ յանօրինացն, և անտի երթեալ ի քաղաքն Լայիլայն, և անդ կամեցան այրել զնա հրով և ոչ այրեցաւ ։

‘‘Եւ նա գնաց ի Նախչուան և անդ ձգեցին զնա ընդ պարիսպ քաղաքին և ոչ վնասեցաւ ։

‘‘Եւ դարձեալ եկն ի Թաւրէզ և գնաց ի Մարագայ, ուր կախեցին զնա գլխի վայր զերիս աւուրս վասն ի Քրիստոս հաւատոյն, և Աստուած պահեաց զնա անվնաս ։

‘‘Եւ այնպէս շրջագայեալ ի Քրդստան, ի Պարսկաստան, ի Հայաստան, ի Վրաստան, յԱսորիստան, ի Բաղտատ, և յայլ բազում տեղիս, քարոզութեամբ ածեալ զբազումս ի հաւատս Քրիստոսի ։ Ամս Խ. այնպէս ջանայ և ի նոյն ծերացաւ ։

‘‘Եւ յետոյ երթեալ ի Շիրվան ի քաղաքն Շամախի, և յորդառատ վարդապետութեամբն քարոզեաց անդ զՔրիստոս Աստուած ։

‘‘Զոր կալեալ անօրինացն՝ տարան առ դատաւորն ի հարցանել, և նա այնպէս խոստովանեցաւ զՔրիստոս Աստուած ։